

մենք չուպագրեցինք, որովհետեւ մի մասի պատասխանը պարզ է, միւսներին դժուարանում ենք պատասխան տալ: Մենք գիտենք, որ եթէ թուելու լինէին մեր եկեղեցւոյ գաւթում թէ հօտի եւ թէ նորա հոգեւոր հովիւների կատարած զեղծումները՝ շունչ չէր հասնի հաշին ամփոփելու համար. գիտենք, որ կան տեղեր, ուր ոչ միայն ժամակարգութեան մասերն են խանգարուում, այլ ամբողջ ժամակարգութիւնը. ուր ամփոփելով ժամ չեն ասում, իսկ ասելիս տարբերութիւն չեն դնում՝ հանգստեան շարականն է երգածը թէ յարութեան. ուր առաջաւորաց պահին ճաշու ժամ՝ ասել եւ նման կարգեր վերացրած են բոլորովին. ուր քահանայն կրկնակողիկներով է սեղան քարծրանում՝ եւլն եւլն: Գիտենք, եւ դժբաղդաբար դէմն առնելու շատ միջոցներ չունինք: Որպէս զի կարելի լինի այստեղ հիմնական քարեփոխութիւններ անել, առաջ մարդիկ պէտք է փոխուին. իսկ դորա համար ժամանակ է հարկաւոր եւ նոր պայմաններ: Մենք կարող ենք միայն յորդոր կարդալ, որ ամէն հասկացող հայ իւր պարտքը համարէ այսպիսի զեղծումների վերայ ուշադրութիւն դարձնել. չասէ՝ իւր գործը չէ՝ կամ հոգեւոր ատեանին մի բողոք, լրագրին մի յօդուած գրելուց յետոյ չճանձրանայ: Զուր ենք կարծում, թէ այսպիսի խնդիրների մեծին խօսելը չուր ծեծել է. աշխարհիս վերայ ոչինչ չի կորչում՝ չի կորչում՝ նաեւ ճշմարիտ, ազնիւ խօսքը: Գլխաւոր ջանքը պէտք է լինի համայնքի այն գիտակցութիւնը զարթեցնել, որ եկեղեցական կեանքի մէջ դաւանութիւն, քարոյականութիւն, ծէս, կանոն, արարողութիւն, անօթ, շինուած՝ ամէն շարժում՝ սերտ կերպով կապուած են միմեանց հետ եւ մէկը տեղից շարժել կարելի չէ, առանց միւսը խախտելու: Եկեղեցւոյ ինքնուրոյնութիւնը պահպանելու համար չնչին համարուող կէտերն անգամ՝ նշանակութիւն ունին. նշանակութիւն ունի թէ ինչպէս է շինուած տաճարը, սեղանը, խաչը, ջահը. ինչպէս է կարուած զգեստը, ինչպէս նկարուած պատկերը. տօներն ինչպէս են տօնուում, շարականներն ինչպէս երգուում՝ եւլն: Իսկ շատ այդպիսի կէտեր կան, որ մեր աշ-

քի առաջ են, րայց չենք նշմարում: Գեշտութեամբ ուղղել կարող ենք, րայց ուշադրութիւն չենք դարձնում, որովհետեւ անտարբեր ենք դէպի եկեղեցին, որովհետեւ չենք զգում: Եւ մեր հոգեւոր կեանքի զարկերակները նորա մէջ են ամփոփուում ու մի սիրտ կազմում եւ մեր ստացած արիւնը մարտը ու հարազատ կլինի մինչեւ այն ժամանակ միայն, քանի կենդանի է այդ սիրտը՝ հայրենի լեռների մարտը շնչով է սնուում՝ եւ քաքախում:

ՍԱՐԱՍՓԵԼԻ ԱՂԵՏԸ.

ԴԵԿՏԵՄԲԵՐ 19-ին երկրաշարժը Ախալքալաքի գաւառի բազմաթիւ հայաբնակ գիւղեր աւերեց, հարիւրաւոր մարդոց փլատակների տակ թողնելով և հազարաւորների՝ անտուն, անօգնական՝ սաստիկ ձմրան սառնամանեաց մէջ: Որչափ անգօր է մահկանացու մարդը բնութեան այսպիսի արհաւիրքների առաջ. հանգիստ ապահով նստած ժամանակ յանկարծ փչում է տունը գլխին, և ի՞նչ պատահմամբ մի հայր, մի մայր, մի ծերունի, մի երեխայ շուռլը բերնում ելնում է աւերակների տակից՝ ի՞նչ պէտք է զգայ նա այն բաղկին, երբ միտքն է գալիս, որ ոչ ոք չկայ այլևս իւր սրտի սիրելիներից՝ չկայ իրեն կաթ տուող կովը, մէջքի վերայ տանող ձին, գութան ձգող կըր — ինքն է միայն մնացել, իւր չոր դուխը ողբալու: Ի՞նչ պէտք է զգայ նաև կողմնակի դիտողը. նոյն իսկ այն դէպքում, երբ անակնկալ դժբաղդութիւնը միայն մի մարդու է հասել, երբ նրա աչքի առաջ դուրս են բերում կառքի տակ ընկածին, ջրում խեղդուածին, կրակի մէջ այրուածին՝ ընդարմացած մնում է նա և պարզ հաշիւ տալ չի կարող, թէ ինչ է կատարուում իւր շուրջ. իսկ երբ այսպէս հարիւրներ ու հազարներ են զոհ գնում մի հարուածով... Ո՛հ, աղէտալի է յիրաւի մարդու կեանքը, անազորոյն բազդի ձեռքին խաղալիք: — Բայց մի՞թէ խաղալիք, մի՞թէ Նա, որ մեր բոլոր ցաւերը վերցրեց և ծանապարհ ցոյց տուաւ դէպի ճշմարտութիւն և կեանք՝ մարդկութեան այդպիսի մեծ ցաւերի համար սպեղանի չունի, չի կարող ձգել

լուսոյ և յուսոյ մի ճառագայթ վհատութեան
այսպիսի վայրկեաններում մոռցած հոգու
մէջ և համոզել նորան որ մենք այնուամենայ-
նիւ պատահականութեան գերիններ չենք, այլ
սիրելի զաւակներ մի Երկնաւոր Հօր, առանց
Որի կամքի ոչ մի մազ մեր գլխից չի ընկնում
Անշուշտ Աղէտը՝ մեծ թէ փոքր փորձաքար
է միշտ մեր հաւատոյ մաքրութեան և հաս-
տատութեան համար, փոքր աղէտը փոքր
շրջանում է ցնցում յառաջ բերում մեծը
պէտք է ամբողջ ժողովուրդ ցնցէ և շատերին
զգայնել տայ, որ խիստ ողորմելի կլինէինք, ե-
թէ ստացուածքի տրինակիցներէ, նոյն խոկ
մեր սեփական մարմնի վերայ դրած լինէր մեր
յոյսը, մի ակնթարթում կորցնել կարելի է այդ
բոլորը, պէտք է այն որոնել, որ անկորուստ
է, Պէտք է ջերմ հաւատով դէպի Սա բար-
ձրացնել աղերսաւոր աչքն ու բազումները,
որ միակ յաւիտեականն է ու անփոփոխը,
անմատչելին ամէն տեսակ պատահարների և
արհաւիրքների համար, և Նորա գլխութեանն
ու խնամող սիրոյն ապաւինելով, լեցուել փո-
խադարձաբար գլխութեամբ ու սիրով դէպի
թշուառութեան գիրկն ընկած մերձաւորը:
Այո՛, որչափ և տկար լինի մարդ իւր մաքի և
ձեռքի ու ժով բնութեան դէմ կռուելու՝ նո-
րա հասցրած զրկանքները թիթեանցնելու հա-
մար բարոյական մեծ ոյժ ունի, և այսպիսի
աղէտների դիմաց պէտք է որ հանդէս գայ
այդ ոյժը, Ժողովուրդի լծմամբ զգացումները
պէտք է զարթնեն այսպիսի բուսկներում և
սիրոյ մի մեծ յորձանք պէտք է կազմուի, որ
կարճ միջոցում լուանայ և ծածկէ աղէտի հետ-
քերը: Այդ եղբայրական սիրոյ շնորհիւ յար-
կից ու զոյքից զրկուածը ապաստանարան
պէտք է դանէ մերձաւորի յարկի տակ և
վերացած տեսնէ մի բուսկ իմն ու քոնի խրտ-
ութիւնը, արինակիցներից և սիրելիներից
զրկուածը զգայ, որ հարիւրաւոր մղոններ
հեռաւորութեան վերայ եղբայրներ ունի և
քոյրեր և մայրեր, պէտք է վերջապէս աւե-
րակների միջից նոր կեանք սկսուի և տառա-
պեալները կորով ստանան ապաստամբ գետինը
կրկին սանձելու և ստիպելու որ իրենց օրա-
կան պարէնը հայթայթէ:

Ազգիս Սրբազնազայն Հայրապետը աղէտի

լուին առնելով՝ պատուիրեց անմիջապէս հե-
ռագրով որ Տփլիսի վիճակային արդիւնք-
ներից շտապեն 1000 լուրի նպաստ հասցնել
իւր անուամբ երկրաշարժից վնասուածներին
և բոլոր թեմերում հանգանակութիւն բանան:
Եւսալի է, որ հօտը չի դանդաղի հեռեւելու
իւր Հովուապետի օրինակին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Շամխու Կոնսիստորիայի նախնե-
րամ Բարձր Մեսրոպ վրդ. Տ. Մովսիսեան
Վեհափառ Հայրապետի բարեհաճ թոյլտու-
թեամբ վեցամեակ արձակուրդ ստանալով
պէտք է մեկնի Ս. Պետերբուրգ մագիստրոսու-
թեան քննութիւն տալու համար:

— Սինօդիանդամ Գեր. Մսայի արքեպիս-
կոպոս Աստուածատրեան Բարձր հրամանով
հաստատուել է Շամխու թեմի առաջնորդ:

— Արժ. Արսէն վրդ. Դլածեան Վեհա-
փառ Հայրապետի օրբ. կոնգակով նշանա-
կուեցաւ Բագուի եկեղեցեաց գործակալ:

— Տ. Սաշիկ վրդ. առաջնորդական փո-
խանորդ Սալմաստի ժամանեց Ս. Էջմիածին
և Վեհ. Հայրապետի հրամանաւ կարգուե-
ցաւ թանգարանապետ Ն. Սրբութեան շինել
տուած նոր թանգարանի: Սաշիկ վարդապետ
իւր Պարսկաստանում եղած միջոցին ձեռք
բերած հնագիտական ճոխ ժողովածուն նուի-
րել է նոյն թանգարանին:

— Ն. Սրբութեան բարեհաճ կարգա-
դրութեամբ Ն. Վեհափառութեան գիւանա-
պետ Բարձր Կորիւն վարդապետ և Մայր
Աթոռոյ թանգարանապետ Տ. Սաշիկ վրդ.
Սաղմոսափանք երթալով օժեցին Ս. Աստուա-
ծածնայ փոքրիկ եկեղեցին տեղական զիւղա-
ցիների օրինակատարութեանց և մշտական
ժամերգութեան համար Մեծ տաճարի օժ-
ման նաւակատիքը թողուած է յաջորդ զար-
նան:

— Ախալցխայի փոխանորդ Տ. Պետրոս
վարդապետ իւր յաջորդի ժամանելուց յե-
տոյ վերադարձաւ Ս. Էջմիածին:

— Տփլիսի Ս. Սարգսի վանուց վանա-